ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թ.

№ 2 (1066)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

Մանկավարժական համալսարանում փետրվարի 8-ին անցկացվեց «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին» խորագրով գիտաժողով: Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը:

«1941-1945 թթ.-ի պատերազմը մեզ համար իսկապես հայրենական էր, քանի որ հայ ժողովուրդը պատերազմի ընթացքում պաշտպանում էր իր հայրենիքը՝ Հայաստանը, որը մաս էր կազմում խորհրդային պետության, պաշտպանում էր թուրքական հրոսակախմբերի՝ արդեն իսկ ծրագրված հարձակումից, որոնք դաշնակիցն էին Գերմանիայի: Հայ-թուրքական սահմանին կենտրոնացված էին այդ պետության 25 դիվիզիաներ, որոնք պատրաստ էին հատել սահմանը և իրականացնել նոր եղեռն, ավելի սոսկալի, ավելի ողբերգական՝ իր հետևանքներով: Պատերազմը Մեծ հայրենական էր մեր ժողովրդի համար համար, քանզի 20-րդ դարում, մեր ողջ պատմության ընթացքում մենք՝ հայերս, չենք ունեցել ժողովրդի զանգվածային այնպիսի մասնակցություն ռազմական գործողությունների և թիկունքի ապահովման աշխատանքների, ինչպես 1941-45 թթ.-ին»:

Ռեկտորը հիշեցրեց Երկրորդ աշխարհամարտում Հայ Առաքելական եկեղեցու ավանդի, հայկական վեց դիվիզիայի մասնակցության և պատերազմում իրենց ռազմական տաղանդով աչքի ընկած հինգ հայ մարշալների մասին, որոնց մի մասը ծագումով ղարաբաղցիներ էին, ինչպես նաև Բրեստի առաջին հակագրոհը կազմակերպած Սամվել Մաթոսյանի մասին:

Ռուբեն Միրզախանյանը ևս մեկ անգամ արձանագրեց՝ երրորդ հանրապետության շրջանում՝ տարբեր դիրքորոշում ունեցող իշխանությունների օրոք, հայ ժողովուրդն ունեցել է և ունի մեծագույն հարգանքի արժանի պատմական հիշողության դրսևորում դեպի Մեծ հայրենականի հիշատակը հավերժացնող հուշարձանները, որոնք վեր են խոյանում մեր երկրի տարբեր բնակավայրերում:

Մեր խնդիրն է անվերապահորեն պահպանել ազգային հիշողությունը, ինչը ժողովրդի գաղափարախոսական կարևորագույն իմաստավորումներից է:

➢2

Վահան ՏԵՐՅԱՆ

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հմայող ու հին խոստում:
Եվ միթե այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպես քնքուշ
Եվ խոնարհվում քեզ պես համառ,
Օ, հայրենիք դառն ու անուշ:
Չշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք.-
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ,
Խեղճությունդ խավար ու լուռ,
Աղոթքներդ դառն ու ցավոտ,
Զանգակներիդ զարկը տխուր
Եվ խուղերիդ լույսերն աղոտ:

Հայաստանը քար է: Որտեղ ոտք դնես՝ քար է զրնգում: Ամեն կողմ, ամեն տեղ: Լեռներ, ժայռեր, լեռներ, ժայռեր: Այծերը երկու հարյուր արշին վեր պետք է բարձրանան, քարերի միջից երկու խամրած խոտ պոկելու համար: Եվ եթե մարդ համառություն չունի և չունի այն, որ անվանում են հայրենիքի սեր, այստեղ չի կարող ապրել: Այստեղ ապրելու համար սեր պետք է, կրակ պետք է, եղան ճակատով խևություն պետք է: Վերջապես, եղբայր, այս քարերը մենք սիրում ենք, դարեր կապվել ենք նրանց հետ և չենք ուզում բաժանվել, պետք ունենք նրանց, և նրանք էլ պետք ունեն մեզ:

Կոստան ԶԱՐՅԱՆ

Հանդիպում ուսանողական ակտիվի հետ

Արցախի դեմ ադրբեջանցիների սանձազերծած պատերազմի օրերին հայ ժողովուրդը միասնական ջանքերով օգնում էր հայրենիքի պաշտպաններին և Հայաստանի տարբեր վայրերում ծվարած արցախցիներին: Մանկավարժական համալսարանի ուսանողները ևս գործի էին լծվել. ամեն ինչ անում էին՝ աջակցելու և ոգևորելու սահմանին կռվող հայ զինվորին:

Հետպատերազմյան ժամանակներում արդեն օգնության կարիք ունեն պատերազմում զոհվածների ընտանիքներն ու հաշմանդամությամբ վերադարձածները:

Փետրվարի 10-ին հենց այս խնդիրների համակարգմանն էր ուղղված բուհի ուսանողական ակտիվի հետ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հանդիպումը:

Ռեկտորը խոսեց պատերազմական օրերին համալսարանի ուսանողների ակտիվ աշխատանքի ու նախաձեռնությունների մասին:

«Թող ոչ մեկի մոտ տպավորություն չստեղծվի, թե այն աշխատանքը, որ արեցիք, իզուր է անցել,-ասաց ռեկտորը:-Դուք անհրաժեշտ կամքի դրսևորման օրինակներ ցույց տվեցիք, որով կարող եք հպարտանալ ձեր հետագա տարիների աշխատանքային գործունեության ընթացքում: Պետք է հերոսացնել բոլոր նրանց հիշատակը, ովքեր մնացին պատերազմի դաշտում. դա զոհվածներին պետք չէ, դա մեզ է պետք»:

Ռեկտորն ուսանողական ակտիվին իրազեկեց, որ այդ ուղղությամբ աշխատանքներն իրականացնելու համար ստեղծվել է համակարգող խումբ՝ ուսանողներին հորդորելով ակտիվ մասնակցություն ցուցաբերել Մանկավարժական համալսարանի զոհված ուսանողների և շրջանավարտների մասին տեղեկություններ հավաքելու և գրքույկ ստեղծելու գործին:

Համալսարանի Ալեք Մանուկյան մասնաշենքի բակում նաև կդրվի Մանկավարժական համալսարանի զոհված ուսանողների և շրջանավարտների հիշատակն անմահացնող հուշակոթող:

Զոհվածների ընտանիքներին ու հաշմանդամներին բուհը պետք է նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերի, որովհետև դա յուրաքանչյուրի քաղաքացիական պարտքն է:

«Տա աստված, որ այսուհետև կամավորական աշխատանքներն ուղղված լինեն ոչ թե ողբերգության հետևանքների վերացմանը, այլև հայրենիքի բարօրությանն ու զարգացմանը»,-ամփոփեց ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Պատերազմի ընթացքում կամավորական ակտիվ աշխատանքի համար ուսանողները հավաստագրեր ստացան, որոնցով 5 միավոր կավելացվի նրանց ավարտական քննության արդյունքին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

➢1 «Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում մեր ժողովրդի մասնակցության մասին պատմագիտական ուսումնասիրություններն արդիական է, և այդ բացը որոշ չափով լրացնելուն է կոչված մեր գիտաժողովը»,-ընդգծեց ռեկտորը:

76 տարի առաջ տեղի ունեցած պատերազմի մասին այսօր խոսելը ակտուալ է, զգաստացնող և իմաստավորող՝ ասաց բանախոսը:

Ողջույնի խոսք ասաց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

Դեսպանը խոսեց Արցախի պատերազմի ողբերգական անցքերի մասին, ընդգծեց հետպատերազմյան ժամանակահատվածում անցկացվող գիտաժողովի խորհրդանշական լինելու հանգամանքը, Խորհրդային Միության դեմ հիտլերյան Գերմանիայի կողմից սանձազերծված Երկրորդ աշխարհամարտի չմոռացվող պատմության դասերը՝ Խորհրդային Միության ժողովուրդների պայքարում առանձնացնելով և արժևորելով հայ ժողովրդի ռազմական տաղանդի դրսևորումներն ու ավանդը հաղթանակի մեջ:

«Այսօր խնդիր է դրված պաշտպանել ոչ միայն հայրենիքի սահմանները, այլև պատմությունը: Ով չի հիշում իր անցյալը, նրան սպասվում է մռայլ ապագա: Մեր հայրերի ու պապերի սխրանքը պարտավորեցնում է՝ չթողնել, որ կրկնվի այնցյալի ողբերգությունը»,-ասաց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

Դեսպանը գիտաժողովի մասնակիցներին մաղթեց խաղաղություն և բարօրություն:

Հայաստանում Բելառուսի Հանրապետության դեսպանի խորհրդական Վյաչեսլավ Վիսուխինը խոսեց Երկրորդ աշխարհամարտի պատերազմական գործողությունների ու արհավիրքի մասին՝ առանձնապես կանգ առնելով շրջափակման մեջ հայտնված Բելառուսի և Բրեստի մոտ հայկական զորամիավորումների մղած մարտերի ու պարտիզանական գործողությունների վրա: Բանախոսն ընդգծեց Բելառուսի ազատագրման համար մղվող մարտերը ղեկավարող հայ զորավարների, մասնավորապես Հովհաննես Բաղրամյանի սխրանքը:

Ելույթ ունեցողը շեշտադրեց գիտաժողովում քննարկվող թեմայի արդիականությունը և պատմության վերարժևորման անհրաժեշտությունը:

Լիագումար նիստի մասնակիցները լսեցին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի «Հայորդիների մասնակցությունը հակաֆաշիստական դիմադրական շարժմանը Ֆրանսիայում Երկրորդ աշխարհամարտի տարիներին» խորագրով զեկուցումը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին երկու բաժանմունքներում: Զեկուցողներն անդրադարձան Հայրենական մեծ պատերազմի մարտական գործողություններին հայուհիների մասնակցությանը, հայ հերոսական գյուղին, դասալիքների խնդրին, հաղթանակում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության ներդրմանը, Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին, ծագումով շուշեցի ԽՍՀՄ հայ հերոսներին, Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սիմոն Վրացյանի գործունեությանը և այլ հարցերի:

Մահացել է Հովհաննես Չիլինկիրյանը

Կյանքից հեռացել է ՀՊՄՀ-ի լավագույն բարեկամներից մեկը՝ Հովհաննես Չիլինկիրյանը: Նա 96 տարեկան էր, սփյուռքի նշանավոր ազգային-քաղաքական գործիչ, հրապարակախոս, պատմաբան և բարերար, ինչպես նաև հայ բանաստեղծ, արձակագիր, բժիշկ Ռուբեն Սևակի եղբորորդին:

Հովհաննես Չիլինկիրյանը ծնվել է 1924 թվականի սեպտեմբերի 24-ին Կ.Պոլսի մերձակայքում գտնվող Ֆլորիա գյուղում: Ավարտել է Պեզազյան վարժարանը, ապա սովորել Կ. Պոլսի Ավստրիական քոլեջում: Չիլինկիրյանը հորեղբոր օրինակին հետևելով՝ ընդունվում է Կ.Պոլսի բժշկական համալսարանը, սակայն հեռանում է բուհից և աշխատանքի անցնում վաճառականներից մեկի մոտ որպես գրագիր:

1946 թվականին բազմաթիվ պոլսահայեր, այդ թվում նաև Հովհաննես Չիլինկիրյանը, ցանկություն են հայտնում ներգաղթել Հայաստան, սակայն թուրքական ոստիկանության հետապնդումների, հարուցած արգելքների պատճառով պոլսահայերի թվում նաև Չիլինկիրյանին չի հաջողվում ներգաղթել Հայաստան և հարկադրված մնում է Կ. Պոլսում:

1955 թվականի սեպտեմբերի 6-7-ին Չիլինկիրյանը ականատես է լինում հույների և հայերի նկատմամբ Կ.Պոլսում թուրքական ոստիկանության աջակցությամբ զինված խուժանի ավերիչ գործողություններին:

1970-ական թվականներին Չիլինկիրյանը հեռանում է Կ. Պոլսից և բնակություն հաստատում Ֆրանսիայի Նիս քաղաքում, ամբողջովին նվիրվում սփյուռքում հայապահպանության գործին, իր պատմագիտական աշխատություններով մերկացնում թուրք և եվրոպական կեղծարար հեղինակների հակահայկական նկրտումները:

Չիլինկիրյանը հսկայական աշխատանք է կատարել իր հորեղբոր՝ նշանավոր բանաստեղծ Ռուբեն Սևակի գրական ժառանգության հավաքման ու պահպանման համար:

Նա ստեղծել է «Ռուբեն Սևակ մշակութային հիմնարկը», որն իր կարևոր գործն է համարում բանաստեղծի գրական-հասարակական ու հեղափոխական գործունեության լուսաբանումն ու նրա գաղափարների տարածումը:

2009 թվականին Չիլինկիրյանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրավերով մի քանի օրով այցելեց Հայաստան, իսկ 2013 թվականին էջմիածնում, Նորին Սուրբ Օծություն Գարեգին Երկրորդ կաթողիկոսի օրհնությամբ, բացվեց Ռուբեն Սևակի անվան թանգարան-պատկերասրահը, որով իրականացավ մեծ բարերարի տարիներով փայփայած երազանքը: Սա նյութական իմաստով Հայաստանում երբևէ արված ամենաարժեքավոր նվերն ու բարեգործությունն էր:

Նա թանգարանի միջոցով հայրենիքին փոխանցեց Ռուբեն Սևակի գրական-գեղարվեստական ժառանգության զգալի մասը: Այցի շրջանակներում Հովհաննես Չիլինկիրյանը հյուրընկալվեց նաև Մանկավարժական համալսարանում: ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը մեծ բարերարին շնորհեց բուհի բարձրագույն պարգև՝ «Խաչատուր Աբովյան» մեդալ: Նրա նախաձեռնությամբ և հովանավորությամբ 2017 թվականից Մանկավարժական համալսարանում անցկացվում էր Ռուբեն Սևակի անվան ամենամյա մրցանակաբաշխություն, որին մասնակցում էին ինչպես ՀՊՄՀ-ի ուսանողները, այնպես էլ Հենակետային վարժարանի աշակերտները՝ ներկայացնելով գրող Ռուբեն Սևակի կենսագրական, հասարակական գործունեության և գրական բարձր շերտերը քննող խոհագրություններ: Ամեն տարի լավագույն 3 աշխատանքներն արժանանում էին դրամական պարգևի:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներն իրենց խորը վշտակցությունն են հայտնում սփյուռքի նշանավոր ազգային-քաղաքական գործչի, հրապարակախոսի, պատմաբանի և մեծ բարերարի հարազատներին և բարեկամներին:

ՀՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Փետրվարի 2–ին Մանկավարժական համալսարանում անցկացվեց 4 պարբերականների և գրքերի շնորհանդես: Ներկայացվեցին «Ներառական կրթության ռազմավարություն» դասագիրքը, «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկը, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները» և «Հատուկ կրթության հայկական ամսագիր» գրախոսվող միջազգային անգլալեզու պարբերականները: Շնորհանդեսին ներկա էին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, դպրոցների ներկայացուցիչներ:

Ներկաները նախ դիտեցին պարբերականների և ձեռնարկների մասին պատմող ֆիլմ, ապա ելույթ ունեցավ ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը:

Ռեկտորը խոսեց անգլերեն լեզվով տպագրվող «Իմաստություն» ամսագրի մասին, որով համալսարանի գործունեությունը հասու է լինում միջազգային շրջանակներին: 2018 թվականից այն ներառվեց SKOPUS և Web of Scien գիտական շտեմարաններում: Ռեկտորը խոսեց դրան հասնելու խնդրի լուծմանը նպաստող մի շարք հանգամանքների, այդ թվում՝ միջազգային գիտական շրջանակների հետ աշխատանքի մասին: Պարբերականի հոդվածների հեղինակները աշխարհի տարբեր երկրների հեղինակավոր գիտնականներ են: Անգլերեն լեզվով լույս է տեսնում նաև «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» պարբերականը:

Ռուբեն Միրզախանյանն ընդգծեց, որ առաջնորդվելով այդ երկու պարբերականները ներկայանալի դարձնելու փորձառությամբ, որոշվել է ևս 2 պարբերական դարձնել միջազգային, որոնցով բուհը կդառնա առավել ճանաչելի, ինչը նաև ենթադրում է մեծ աշխատանք:

Խոսելով համընդհանուր ներառական կրթության մասին՝ ռեկտորը նշեց, որ չպետք է տուրք տալ օտարերկրյա մոտեցումներին և որ մեր պարբերականները պետք է ներկայացնել ակադեմիական հարթությունում: Այս առումով «Ներառական կրթության ռազմավարությունը» դասագիրքը, որ ստեղծվել է Մանկավարժական համալսարանի և Մինեսոտայի համալսարանի համագործակցությամբ, խիստ դրական և բացառիկ օրինակ է:

«Չգիտես ինչու, վերջին տարիներին կրթական բարեփոխումներն սկսում են բուհերից ու ավագ դպրոցներից,-ասաց ռեկտորը,-մինչդեռ դրանք պետք է սկսել նախադպրոցական հաստատություններից ու տարրական դպրոցից: Եվ ամենևին էլ պետք չէ կապկել ու ամբողջությամբ ընդօրինակել այլ երկրների փորձը, այլ պետք է հաշվի առնել մեր կրթության զարգացման ավանդույթներն ու ազգային կրթության առանձնահատկությունները, այլ ➢3

ՀՆՈՐՀԱՆԴԵՍ...

➢3 երկրներից, հիմնականում սկանդինավյան երկրներից վերցնելով միայն դրականը՝ տեխնոլոգիաները»:

Ելույթ ունեցան մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը:

Նրանք խոսեցին շնորհանդեսին ներկայացված պարբերականների ու գրքերի մասին՝ նախաձեռնությունից մինչև գաղափարի իրականացում, թե ո՛ր լսարանին է ուղղված և ի՛նչ խնդիրների լուծմանն է միտված:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ միջազգային բաժնի ղեկավար, «Ներառական կրթության ռազմավարություն» դասագրքի խմբագիր Մարիաննա Հարությունյանը խոսեց «Ներառական կրթության ռազմավարությունը» դասագրքի մասին՝ ներկայացնելով ձեռնարկի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, զարգացման ընթացքը, դասագրքի անդրադարձը ժամանակի մարտահրավերներին և հետազոտական աշխատանքների կատարման արդյունքը: Բանախոսի հավաստմամբ՝ ներառական աշխատանքը ներկայացվել է որպես արժեհամակարգ և այն կծառայի ուսուցչին, աշակերտին և ուսանողին:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը խոսեց «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները» և «Հատուկ կրթության հայկական ամսագիր» գրախոսվող միջազգային անգլալեզու պարբերականների ստեղծման մասին՝ փաստելով, որ գիտության ոլորտում ներկայացվող բոլոր մոտեցումների լեզուն անգլերենն է և որ միջազգային հանրության շրջանում ներկայանալի լինելու և երկխոսելու ճանապարհը պարբերականները անգլերեն լեզվով ներկայացնելու միտումն է:

Պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը հպարտությամբ ընդգծեց, որ տարածաշրջանում չկա մեկ այլ ներկայանալի պարբերական, քան VIDOMS պարբերականն է:

Նա ներկայացրեց երկու պարբերականները՝ որպես մանկավարժահոգեբանական ոլորտի առաջընթացին նպաստելու, խնդիրները լուծելու և աշխարհի զարգացման միտումներին տեղեկանալու կարևորագույն միջոց՝ ընդգծելով, որ դրանք ներգրավված են միջազգային 6 հեղինակավոր շտեմարաններում, իսկ հետագայում հավակնում են ընդգրկվել նաև գիտաչափական շտեմարաններում:

Հաջորդ բանախոսը մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մանկավարժության ամբիոնի վարիչ և ամբիոնին կից գործող «Մանկության հիմնախնդիրները» լաբորատորիայի ղեկավար Սիդա Թոփուզյանն էր:

«Մենք շարունակելու ենք կատարել մեր հիմնական առաքելությունը՝ օգնել տարրական դպրոցին և մանկավարժագիտությունը հասցնել դպրոց»: Վեց տարվա ընթացքում ամբիոնի և լաբորատորիայի կողմից ստեղծված չորս ձեռնակները հանգամանորեն ներկայացնում են ուսուցման ու դաստիարակության գործընթացի հիմնախնդիրները, նաև անդրադառնում նրանց թողած ազդեցությանը երեխաների վրա: Վերջինը «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկն է, որում, առաջին անգամ, ուսուցչի կոմպետենցիաներին զուգահեռ տրվել են երեխաների կոմպետենցիաները, միաժամանակ մշակվել են մանկավարժական պայմաններ և մանկավարժական համատեղելիություն, որոնք կօգնեն ուսուցչին աշակերտի հետ աշխատանքում:

Ուսուցիչը պետք է անպայման ծանոթանա մեդիատեխնոլոգիաներին, որովհետև ամեն օր մենք տեսնում ենք, թե ինչպես է համացանցը մեծացնում երեխաների խոցելիությունը Նրա կարծիքով թվային աշխարհում մանկավարժների ու ծնողների խնդիրը պետք է լինի չեզոքացնել այդ վնասները՝ միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով համացանցի առավելությունները յուրաքանչյուր երեխայի համար:

Բանախոսը կարևորեց այն հանգամանքը, որ բոլոր մշակումները փորձարկվում, իրականացվում են Մանկաարժական համալսարանի հենակետային դպրոցներում:

Տարրական դպրոցը մենք պետք է պահենք ուշադրության կենտրոնում՝ ամփոփեց Սիդա Թոփուզյանը, դպրոցների հրավիրված ներկայացուցիչներին հորդորելով օգտագործել Մանկավարժական համալսարանի ներուժը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՔԱՌՈՐԴ ԴԱՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Լիլիթ Աշոտի Տեր-Գրիգորյանը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի հայ-ռուսական բաժնի շրջանավարտ է: 1988 թվականին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Ավելի քան 25 տարի Լիլիթ Տեր-Գրիգորյանն աշխատում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որպես դասախոս, միաժամանակ զբաղվում է գիտական բեղուն գործունեությամբ՝ իր մասնակցությունը բերելով Հայաստանում և Սփյուռքում հայ մանուկների, պատանիների ու երիտասարդների կրթադաստիարակչական գործին:

Նրա հետաքրքրությունների և գործունեության ոլորտներն այսօր ընդգրկում են հայոց լեզվի ու լեզվաբանության, մայրենիի մեթոդիկայի և մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության հարցերը: Հանրության շրջանում հայտնի են նրա հեղինակությամբ և համահեղինակությամբ ստեղծված այբբենարանները(3), դասագրքերը(9) (արևելահայերեն և արևմտահայերեն), կրոնի դասագրքերը(6), ընթերցանության ձեռնարկներն ու ժողովածուները(10), մեթոդական ձեռնարկները (9), որոնք նպաստում են հայ երեխաների հայեցի դաստիարակությանը:

Լիլիթ Տեր-Գրիգորյանն իր մասնագիտական բարձրարժեք կարողունակությունների և մարդկային որակների շնորհիվ վայելում է ուսանողների և գործընկերների սերն ու հարգանքը:

Շնորհավորելով հոբելյարին՝ մաղթում ենք նրան քաջառողջություն, երկար տարիների արդյունավետ գործունեություն՝ ի շահ հայ սերնդակրթության շարունակականության:

Սկզբնական կրթության ֆակուլտետ
Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Կարևոր ձեռնարկ

«Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկը բաղկացած է երկու գլխից: Ձեռնարկի հեղինակներն են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիայի անձնակազմը և նրա շուրջ հավաքված երիտասարդ գիտնականները, մագիստրոսներն ու հայցորդները:

«Մեդիատեխնոլոգիաների կիրառման մեթոդաբանական հիմքերը» խորագրով առաջին գլխում զետեղված են.

■ մեդիագրագիտության ուղղությամբ ուսուցիչների և ուսանողների շրջանում անցկացված հարցախույզի արդյունքները, որոնց նպատակն է եղել պարզել հարցախույզի մասնակիցների վերաբերմունքը մեդիատեխնոլոգիաների մանկավարժականացման ուղղությամբ,

■ ՀՊՄՀ «Մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող» լաբորատորիայի կողմից մշակված «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» փորձարարական այլընտրանքային դասընթացի փաթեթը, որը 2020 թ. սեպտեմբերից դասավանդվում է ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայում,

■ տարրական դպրոցում մեդիատեխնոլոգիաների կիրառման նպատակները, առանձնահատկությունները, ձևերն ու մեխանիզմները, որոնք նպաստում են ուսուցման գործընթացում մեդիատեխնոլոգիաների ճիշտ ընտրությանն ու կիրառմանը, երեխաների և ուսուցիչների մեդիամշակույթի ձևավորմանը, կրթության որակի բարձրացմանը,

■ մեդիատեխնոլոգիաների օգտագործման գործընթացում ուսուցիչ-ծնող համագործակցությունն ապահովող քայլերը և ծնողական կրթության թեմատիկա՝ մեկ ուսումնական տարվա համար, որոնք կօգնեն ուսուցչին իրականացնելու ծնողական կրթություն, կնպաստեն կրթության որակի բարձրացմանը և այդ ոլորտում ընտանիք-դպրոց կապի ամրապնդմանը:

Երկրորդ գլխում զետեղված են «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» խորագրով գիտաժողովի նյութերը: Գիտաժողովի բոլոր մասնակիցները նշում էին, որ մեզ անհրաժեշտ է դպրոցում բարձրացնել մեդիակրթության և մեդիագրագիտության դերը, դպրոցականներին սովորեցնել մեդիատեխնոլոգիաներից օգտվելու միջոցներն ու կանոնները, օգնել նրանց դառնալ մեդիակրող



ու մեդիաստեղծող՝ մեդիապատերազմում հաղթելու համար: Գիտաժողովի նյութերը վերաբերում են մեդիատեխնոլոգիաների ու մեդիաանվտանգության ապահովմանը տարրական դպրոցում, մեդիատեխնոլոգիաների կիրառմանը տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում, կրտսեր դպրոցականների մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված մեթոդական քայլերի առաջադրմանը:

Ուսումնամեթոդական ձեռնարկը հասցեագրված է կրթության կազմակերպիչներին, տարրական դպրոցի ուսուցիչներին, ծնողներին, մանկավարժական բուհերի ուսանողներին, դասախոսներին և նշված հիմնախնդրով հետաքրքրվող մասնագետներին:

Սիդա ԹՈՓՈՒԶՅԱՆ
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի վարիչ, ՀՊՄՀ «Մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող» լաբորատորիայի վարիչ

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՈՒՐԻՇ Է ՔՈ ՈՒՆԵՑԱԾԸ՝ ՀՈԳՈՒ ԳԱՆՁԸ ԵՐԿՆԱՌԱՔ...»

Բանաստեղծի կյանքը անծիր տառապանք է, մանավանդ եթե, ինչպես ինքն է ասում, իր երգը «ոսկերակ հոգու հանքից է ծնվել»: Պոետական կյանքի՝ «արարումներով ու տքնանքով» լի ճանապարհը իմաստության, մտքի ու խոսքի ամբարման յուրահատուկ շտեմարան է, որից յուրաքանչյուր ոք վերցնում է իրենը: Բանաստեղծը նման է անընդհատ լցվող ու երբեք չդատարկվող շտեմարանի, որտեղ մեզնից յուրաքանչյուրը իր հոգու տաք անկյունն է փնտրում...

Հենց այդպիսին է բանաստեղծ Լիպարիտ Սարգսյանը, ով արդեն հատել է իր կյանքի ութսուներեք տարիները և ստեղծել չորս տասնյակից ավելի գեղարվեստական գրքեր, ուր բանաստեղծական խոհը խորհում է ընթերցողի հետ, ուր միտքն ու հոգին թափառում են մի ուրիշ՝ գեղեցիկ ու լուսավոր երազների աշխարհում՝ հեռու մարդկային անարդարությունից ու կեղծիքից:

Պետք է մեղմորեն ու զգույշ մտնել Լիպարիտ Սարգսյանի բանաստեղծական աշխարհ, քանզի այդ փոքր տիեզերքում «երգը կսկիծ է ու հոգու խռովք», որում էլ տարիների ընթացքում զուլալվել է հայոց բնաշխարհում արարող մարդուն, հողին, ծառին ու թփին, մարդուն ու մարդկայինին ուղղված խորախորհուրդ ասելիքը.

Ես ողջ կյանքում արարել եմ մի աշխարհ՝
Հյուսված սիրո ցավ ու վշտից, կարոտից,
Որ երբ մի օր բացեք դուռը դուք նրա,
Զգաք շունչը, տրոփյունը իմ սրտի։

Դասական պոեզիայի բոլոր ժանրերն ակոսած բանաստեղծն անվարան մուտք է գործել նաև քանդակազարդ քառյակների աշխարհ՝ մեծն Թումանյանին կարծես թե չզիջելով այդ ժանրում.

Հանճարների երգերն անմահ ոսկեհանքից են ծնվում,
Սիրուց անդավ, Արդար հոգու տառապանքից են ծնվում,
Տիեզերքի գաղտնիքների գոց դռները բացելու,
Արարչի հետ խոսք-զրույցի արծագանքից են ծնվում:

Կամ՝

Կառուցածդ պիտի պահես խնամքով,
Ունեցածդ՝ հպարտությամբ, հարգանքով,
Թե օջախիդ հարգը ինքդ չիմանաս,
Չի սրբանա հացդ Տիրոջ օրհնանքով...

Բանաստեղծ, արձակագիր, մանկագիր Լիպարիտ Սարգսյանը Լոռվա բնաշխարհում է ծնվել, Վահագնին նրա ծննդավայրն է, որի մաքրամաքուր ակունքներից է սերել բանաստեղծի գրական հյուսվածքը:

1962 թվականին Լ. Սարգսյանն ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: Հիրավի մեծ ու տաղանդավոր անհատականություններ են ձևավորվել այս կուրսում՝ գրողներ, գիտնականներ՝ Հրանտ Մաթևոսյան, Ֆելիքս Մելոյան, Միհեր Կարապետյան, Ռոբերտ Դանիելյան, Մելս Սանթոյան, Գևորգ Թոսունյան, Ռուդոլֆ Ավագյան...

Լիպարիտ Սարգսյանը սիրով ու ակնածանքով է հիշում իր դասախոսներին՝ Արարատ Ղարիբյանին, Արշավիր Շավարշյանին, Աշոտ Աբրահամյանին, Վաչե Պարտիզունուն, Մորուս Հասրաթյանին, որոնցից ոչ միայն մասնագիտական, այլև կյանքի դասեր է առել: Հիշում է ինչպես 1950-ական թվականների վերջերին Մանկավարժական ինստիտուտում կազմակերպվել էր հանդիպում Մարտիրոս Սարյանի հետ, և դասախոս Արշալույս Բաբայանի հորդորով երիտասարդ Լիպարիտը կարդաց նկարչին նվիրված իր բանաստեղծությունը...Երանելի տարիներ մայր բուհի կամարների ներքո...

Աբովյանական բուհից սկիզբ է առել դեպի գրականություն տանող ճանապարհը, որի տարբեր հատվածներում գրական առատ հունձք է արել բանաստեղծը՝ ի վերուստ տրված ձիրքով ու շնորհով իր շուրջը ստեղծելով գրական հետաքրքիր ու յուրօրինակ մթնոլորտ: Նրա գրչին են պատկանում «Սպասումներ» (1967), «Մի բուռ ցորեն» (1974), «Մարդ և հող» (1978), «Ակոս» (1983), «Վահագնի» (վիպակ պատանիների համար,1986), «Արմատական ծառեր» (վիպակներ, պատմվածքներ, 1991), «Սիրտս ձեզ եմ բացում» (1998), «Խաչված ճակատագիր» (2000), «Հող և հաց» (բանաստեղծություններ, 2003), «Հիշողության արահետներով» (հուշակնարկներ, էսսեներ, գրախոսականներ, 2010), «Կարոտի եզերք» (2010), «Բախտդ հեռվում մի որոնիր» (քառյակներ, 2012), «Արարման խորհուրդ» (բանաստեղծություններ, 2013), «Արդար ճանապարհ» (բանաստեղծություններ, 2016), «Իմ երգաշխարհը» (2018) և այլ գրքեր:

Ճանաչված մի շարք գրողներ և գրականագետներ բարձր գնահատական են տվել Լիպարիտ Սարգսյանի պոեզիային՝ մանկական ստեղծագործություններին, բանաստեղծական ժողովածուներին ու հիանալի քառյակներին: Հեղինակի տարիների վաստակը բազմիցս գնահատվել է կառավարության, Հայաստանի գրողների միության և տարբեր կազմակերպությունների կողմից:

«Իմ երգաշխարհը» ժողովածուն ամփոփում է հեղինակի վերջին տարիներին գրած բանաստեղծությունները, ութնյակները, տրիոլետները և քառյակները:

«Լիպարիտ Սարգսյանի ստեղծագործական աշխարհը առաջին տողից ի վեր արարչագործության ամբողջական պատկերն է, որն իր մեջ է առել մարդ ու բնություն գոյածևերը,-գրում է գրող Ֆելիքս Բախչինյանը:-Ավելի մանրամասնելով այդ փոխկապակցությունը, կարող ենք ասել, որ այնտեղ Արարման մեծ ոգին զգալու հետ զուգահեռ՝ մարդու անցավորության փիլիսոփայությունն է: Անցավորության իմաստախոհության հետ զուգահեռ՝ հայրենական եզերքների ու բնության օրհնաբեր կենդանությունն է: Օրհնաբեր այդ կենդանության հետ զուգահեռ՝ օջախի կրակն ու ընտանեկան սիրո դրախտային թագավորությունն է...»:

Լ. Սարգսյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, բելառուսերեն, լիտվերեն, սերբերեն, մշտապես տեղ են գտել դպրոցական դասագրքերում, նրա տեքստերով գրվել են բազմաթիվ երգեր:

Լիպարիտ Սարգսյանի երգերը ժամանակի համար են, նրանք կարող են դիմանալ ժամանակի բոլոր փորձություններին՝ ամեն անգամ ավելի ու ավելի մաքրվելով ու մաքրագործելով ընթերցողի միտքն ու հոգին այն հաստատ համոզմունքով, որ մարդուն ու մարդկայինը լափող նյութը երբևէ իր տեղը կզիջի բարությանն ու խոսքի ուժին.

Կգա՞ օրը, երբ որ մարդը խոսքով իշխի աշխարհին,
Գեղեցիկը տիրի հոգուն՝ ազնիվն, արդարն ու բարին,
Ձենքերը բյուր ու բազմանուն թանգարանին
պահ տրվեն,
Որպես գործիք ավերումի, սատանայի ու չարի...

Փետրվարի 5-ին բանաստեղծը դարձավ 83 տարեկան:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԸ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍՈՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ

- Սոս, ներկայացիր, խնդրեմ: Ի՞նչ կպատմես քո մասին:

- Ես Թադևոսյան Սոսն եմ: Ծնվել եմ Վարդենիս քաղաքում, բայց արմատներով Սիսիանի Աշոտավան գյուղից եմ: 11 տարեկանից ապրում եմ Երևանում: Սովորել եմ Կոնստանտին Օրբելյանի անվան երաժշտական դպրոցում, որն ավարտելուց հետո՝ 2014 թվականին, ընդունվել եմ Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ֆլեյտայի բաժին: Այն ավարտելուց հետո ընդունել եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ երաժշտության բաժին՝ ընտրելով ֆլեյտա և դիրիժորություն մասնագիտությունները:

Մեկ տարի անց՝ 2019-ի ամռանը, զորակոչվել եմ Արցախ՝ ժամկետային զինվորական ծառայության: Ծառայությունս անց եմ կացրել Արցախի Հանրապետության Մարտակերտ քաղաքում: Սեպտեմբերի 27-ի առավոտյան սկսված պատերազմն անսպասելի էր. սարսափելի էր լսել արկերի պայթյունների խլացնող ձայնը...Առաջին վայրկյաններին ես չէի հասկանում, թե ինչ է կատարվում, երբևէ չէի տեսել նման բան: Բայց շուտով բոլորս ինքնակազմակերպվեցինք, ընտելացանք: Մարտական գործողությունների մասին չեմ ուզում խոսել, միայն կասեմ, որ շնորհակալ եմ հրամանատարիս, որը կռվի մինչև վերջին պահը մեր կողքին էր: Շատ դժվարություններ հաղթահարեցինք, սակայն հրամանատարի տված գիտելիքներով կարողացանք պատվով կատարել մեզ առաջադրված խնդիրները:

- Ի՞նչ է հայրենասիրությունը քեզ համար:

- Հայրենասիրությունը բառերով պատմելու չի, հայրենասեր չեն դառնում, ծնվում են: Ինձ համար անընդունելի է, երբ մեկն ասում է, որ ինքը հայրենասեր է: Հայրենասիրության մասին պետք չէ բարձրաձայնել, պետք է գործերով արտահայտել հայրենասիրությունը:

Հայրենասիրությունն ինձ համար իմ հայրենիքն է, որը սրբություն է, և որից ես երբեք չեմ հեռանա. կմնամ ու կծաղկեցնեմ իմ երկիրը:

- Որքան գիտեմ, դեռ ծառայության մեջ ես: Կներկայացնե՞ս ինչպես է անցնում ծառայությունդ:

- Պատերազմի ավարտից հետո դժվար էր հարմարվել նոր օրակարգին, բայց կարողացանք հետզհետե բնականոն հունի մեջ մտնել: Այժմ պատրաստում ենք համերգային նոր ծրագրեր, մեր երաժշտական կատարումներով փորձում ենք բարձրացնել զինակից ընկերների, մեր զինծառայողների բարոյահոգեբանական ոգին:

- Ի՞նչ ծրագրեր ունես վերադառնալուց հետո:

- Ծրագրեր, մտահղացումներ շատ ունեմ: Նպատակ ունեմ ծառայությունից և կրթությունս ավարտելուց հետո բացել երաժշտական դպրոց, որը կանվանակոչեմ ընկերոջս՝ Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանող, այս պատերազմում զոհված Արմեն Հարությունյանի անունով:

Ուզում եմ ապագա մանկավարժները հպարտանան, որովհետև այն լսարաններում, որտեղ հիմա նրանք անց են կացնում իրենց դասերը, սովորել են հերոսներ:

- Հարգելի Սոս, քեզ մաղթում եմ բարի և խաղաղ ծառայություն: Հուսով եմ, որ զորացրվելուց հետո կիրականացնես բոլոր մտահղացումներդ:

Փետրվարի 12-ը գրող, ԷՊՄԷ շրջանավարտ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան օրն է



■Նայենք ինքներս մեր ներսը, քանի որ տիեզերքը մեր ներսում է, և մնացյալը փուչ է, սառը ամայություն:

Ողբերգությունը գիտակցելն է, այլ ոչ թե նրա մեջ ապրելը:

Ծմակուտցի ցանկացած մարդու մեջ շեքսպիրյան ողբերգություն կա, շիլլերյան ճեղքվածք, տոլստոյական մաքրություն: Էլ ինչու՞ պիտի մարդ հորինեմ:

■ Իմ անհատականությունը ես վերցրել եմ մարդու այն տեսակից, որ եթե չէր աշխատել, հացից ամաչում էր, եթե իր մտածածը չէր, ասում էր «ասում են»: Ես նրանց որդին եմ, ինձ նրանք են ստեղծել:

■ Գիտե՞ս ինչ, կյանք է՝ և մի ակնկալիր անփոթորիկ ծով. և եթե խորտակվում ես՝ մեղքը քոնն է և ոչ թե փոթորկինը, քանի որ փոթորիկը ծովն է: Ո՞ւր է խարիսխդ: Խարի՛սխդ…

■ Ժամանակը փոխվում է, հները չեն կարենում ապրել նոր ժամանակներում, ու դրա համար էլ նորերն են առաջանում…

Մարդն ու անասունը իրարից ջոկվում են հիշողությամբ: Հիշողության մեջ ես՝ ուրեմն վառվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես - հիշողության մեջ չես՝ հրեն բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ հորթին երեկ են մորթել:

■ Մենք ենք ստեղծում այն մթնոլորտը, որի մեջ ժողովուրդն ազգ է դառնում:

■ Գլորվելիք քարն ավելի սարսափելի չէ՞, քան գլորվող քարը:

Կարոտ է, հո սովածություն չի, կանցնի:

■ Մենք ծառերի պես անջատ կանգնած ենք ամեն մեկս իր համար: Այդ ինչպես է լինում, որ անտառի պես լռիկ կեցած աշխարհը դառնում է շանոց:

Հրանտ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Արտյոմ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մանկավարժական համալսարանում յուրաքանչյուր ուսանողի ու շրջանավարտի զոհվելու մասին լուրը ցավով են ընդունում: Աննկարագրելի են այն զգացողությունները, երբ ժամանակ առ ժամանակ մի երիտասարդ տղայի կորուստն են գուժում… Հերթական տխուր լուրը Կուլտուրայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Արտյոմ Ավետիսյանի զոհվելու մասին էր: Շատերի նման նա էլ հայրենիքի սահմանները պաշտպանելիս բռնեց հավերժի ճամփան:

Արտյոմը Կուլտուրայի ֆակուլտետում ռեժիսուրայի մասնագիտության մեջ էր հմտանում. սովորում էր բարձր առաջադիմությամբ: Ով գիտի, միգուցե մենք կորցրինք ապագա հրաշալի ռեժիսորին, ում դերասան ու ռեժիսոր դառնալու երազանքը մի քանի վայրկյանում հօդս ցնդեց:

Արտյոմ Ավետիսյանը: Նա Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղից էր: Կուրսընկերների խոսքով՝ հնարավորություն ունեցել է հետաձգել ծառայությունը, սակայն անհամբեր էր, սպասել չէր ուզում:

Ինչպես ուսումնառության, այնպես էլ ծառայության ընթացքում Արտյոմ Ավետիսյանը մշտապես աչքի է ընկել կարգապահությամբ ու առաջադիմությամբ, պարգևատրվել «Հայոց բանակի գերազանցիկ» մեդալով:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները խորապես վշտացած են Արտյոմ Ավետիսյանի մահվան համար և իրենց ցավակցությունն են հայտնում զոհվածի հարազատներին, զինակիցներին ու կուրսընկերներին:

ՄՈՐԻՍ ԽՈՒՄԱՐՅԱՆ

Արցախյան պատերազմում զոհվել է Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Մորիս Խումարյանը: Նա Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի ուսանող էր: Մորիսը ծառայել է Իջևանի զորամասում, հուլիսին մասնակցել Տավուշյան մարտերին, իսկ Արցախյան վերջին պատերազմում՝ Մեխակավանի պաշտպանությանը. 3 ամսից պետք է զորացրվեր:

Մոր բնորոշմամբ՝ տղան կենսասեր էր և նպատակասլաց, կիրթ ու հայրենասեր, մեծ ոգևորությամբ պատրաստվում էին դիմավորել նրան:

«Իր ընտանիքի, ընկերների, շրջապատի լույսն ու սերն էր: Մշտապես ձգտում էր լավագույնին, խելացի էր, դաստիարակված, զուսպ ու համեստ: Չափից դուրս հայրենասեր ու ընկերասեր իմ որդին անհավասար մարտում իր մարտական ընկերների հետ չի օգտագործել նահանջելու հնարավորությունը. վիրավորներին դուրս են բերել, ապա ընկել շրջափակման մեջ»,-նշում է մայրն ու վստահեցնում՝ որդին վայելել է հրամանատարության վստահությունն ու իրականացրել բազում կարևորագույն առաջադրանքներ:

Մորիս Խումարյանին ճանաչողները միակարծիք են՝ նա այն լավագույններից էր, որ պիտի կերտեր Հայաստանի ապագան, իսկ նրա 20-ամյա կյանքն անձնվիրության, ընկերասիրության և հայրենապաշտության իսկական օրինակ էր:

Ավա՜ղ, կտրվեց Մորիս Խումարյանի կյանքի թելը, ընտանիքում թևածող վիշտն աննկարագրելի է:

Մանկավարժական համալսարանի կոլեկտիվը ցավով ու խորին երախտագիտությամբ ցավակցում է ուսանողի հարազատներին, կուրսընկերներին, զինակիցներին ու բոլոր ճանաչողներին, որոնք Մորիսի հետ շփվելու հնարավորություն են ունեցել:

Եղբայրս շարունակում է ծառայել

Լուսանկարի փոշոտ համազգեստով, հոգնած աչքերով, ուժասպառ, բայց մարտական ոգին չկորցրած տղան իմ եղբայրն է՝ Ստեփան Սիմոնյանը:

Ամեն անգամ, երբ առիթ է լինում խոսել պատերազմից, եղբայրս վարպետորեն շրջանցում է թեման, և նրա գեղեցիկ, ազդու, գիշերվա պես սև աչքերը՝ խիտ արտևանունքներով եզերված, ավելի են թանձրանում: Եղբորս երբեմնի ուրախ ու խորաթափանց հայացքում մի նուրբ թախիծ կա, որը նրա առնական կերպարը հերոսական է դարձնում: Դա այն դժվարանշմար շողն է, որը դրոշմվել է աչքերում՝ընկերների կորստյան ցավից…Եղբայրս, ինչպես մեր մյուս բոլոր քաջ հայորդիները, շատ բան է տեսել, բայց ոչինչ չի ասում: Նա ծառայել և դեռ շարունակում է ծառայությունը Արցախ աշխարհում: Այժմ յուրօրինակ սրտի թրթիռով է կապված Արցախին, իր մարտական ընկերներին, այն ժայռ ու քարին, որոնք իրենց մեջ ամփոփում են մի ողջ կյանքի պատմություն: Դժվարությամբ, ինչպես անդնդախոր ժայռերի միջից վերընձյուղված ծիլը, փորձում է ժպտալ՝ սրտում վառ պահելով այն հավատը, որ դեռ բազում արշալույսներ է ունենալու հայ ազգը, որ դեռ երգելու ենք ռազմի հաղթական երգը, որ դեռ մեր եռագույնը փողփողալու է ողջ աշխարհով՝ որպես հաղթանակած երկրի լուռ վկա, որպես միասնական պայքարի հավերժական երաշխիք:

ԷՄՄԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍ

Կարսում, Վարդանի կամրջի կողքին, Սեզարի խանութն է, ուր ես տեսախցիկիս մարտկոցն էի դրել լիցքավորման:

- Գնանք եկեղեցի, Սեզար,-առաջարկեցի ես, երբ արդեն նրա եղբայրը եկել էր, և խանութին տիրություն անող կար:

Վարդանի կամրջից եկեղեցի երկու քայլ էր, բայց այդ տարածքը մենք անցանք շատ երկար. մենք խոսում էինք Կարսի պատմությունից, և արդեն Սեզարն ինքն էր իր ապրած քաղաքի մասին ինձ հարցեր տալիս, զարմանքը չթաքցնելով, թե՝ «Իմ քաղաքի մասին դու ավելի շատ բան գիտես»:

«Իմ քաղաքի մասին» բառերն ես մի կերպ կուլ տվեցի, որովհետև այդ պահին ու այդտեղ ոչինչ չէր փոխվելու, եթե ես ասեի, թե սա քո քաղաքը չի, Սեզար…

Ի՞նչ կփոխվեր, եթե Սեզարին ասեի, թե՝ ձեր դպրոցում քեզ չեն պատմել, որ Պուշկինը եղել է հայկական Կարս քաղաքում և Արսեն անունով հայի ուղեկցությամբ շրջել է ու հիացական տողեր գրել այս քաղաքի մասին: Քեզ չեն պատմել Խրիմյան Հայրիկի՝ Կարս կատարած այցի մասին: Իսկ Հայրիկը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Կարս քաղաք եկել է 1901 թվականի ապրիլ ամսին, ինչպես հայրն է այցելում իր որդու տուն:

Քեզ, Սեզար, չեն պատմել նաև, որ Ադրիանոպոլիսի պայմանագրով 1830-ին հինգ ու կես հազար հայ Կարսից գաղթել է Շիրակ ու Փամբակ: Ու մի նեղվիր, որ ես հիմա այդ ամենը վերհիշում եմ՝ կեսը անձայն, կեսը մրմունջով, պարզապես այդ վերհուշը թելադրվում է իմ այստեղ լինելով՝ կողքիս լինես դու, թե չլինես:

Ես իմ մտորումներով, Սեզարն իր անտարբեր քայլվածքով՝ հասանք Առաքելոց եկեղեցի: Եկեղեցու գավթում մի տղա էր կանգնած, ով ամեն մոտեցողի ժպտում էր, իր ծառայությունն առաջարկում: Ծառայություն ասածը եկեղեցու «պատմությունն» էր, որ նա պատրաստ էր կրկնել ամեն անցորդի համար: Սովորական այցելուին այդ տղան հիացմունք էր պատճառում, որ այդչափ լավ գիտե եկեղեցու պատմությունը, բայց գոնե հայերիս համար առնվազն տարօրինակ էր այդ անգիր տեքստը, որ սովորեցրել էին նրան ու կանգնեցրել այդտեղ: Նրա անգիր արած պատմությունը ոչ մի կապ չուներ իրականության հետ: Բայց այդ, տղան պետք էր՝ հայկական արձանագրությունների փոխարեն այլ գրեր ունեցող որմնաքարեր դնելու ճանապարհով եկեղեցիների մի նոր պատմություն հորինելու և այդ երեխայի (նաև այդ երեխայի) միջոցով մատուցելու համար:

Սեզարը լսում էր այդ երեխայի բլբլոցը, իսկ դրան զուգահեռ իմ ականջներում հստակ ու ամուր հնչում էին Չարենցի տողերը. «…Ինչ որ է հոգին մարմնի նկատմամբ, ինչ որ է ուղեղը, աչքը կամ սիրտը՝ մարդու կազմվածքում-նույնն է Առաքելոց եկեղեցին նահիրյան այդ քաղաքում: - Ինչ որ է Նոտր Դամը փարիզցիների համար նույնն է այդ քաղաքի բնակիչների աչքին — Առաքելոց եկեղեցին»:

- Ըստ այս տղայի ներկայացրածի,-եկեղեցին հայերը չեն կառուցել,-ասաց Սեզարը:

- Դու փորձիր, Սեզար, նրա անգիր արած ասածները մի պահ ընդհատել և պատահական մի հարց տալ:

Սեզարը, որ չէր խորացել իմ ասածի էության մեջ և կարծում էր, թե նկատի ունեմ լրացուցիչ ինֆորմացիա ստանալը, մոտեցավ տղային ու հարցրեց՝ «հայկական ի՞նչ կա այս եկեղեցու հետ կապված»:

Տղան դադար առավ, շփոթվեց, փորձեց իր անգիր արած տեքստի մեջ բյուզանդական բառը զուգահեռել հայկականի հետ, չստացվեց և շվար հայացքով մի պահ նայելով Սեզարին, թուքը կուլ տվեց ու … շարունակեց բլբլացնել անգիր արածը:

…Թե մի Սեզարի «աչքերը բացելով» ի՞նչ կփոխվի, չգիտեմ, բայց այդ տղայի գոյությունը եկեղեցու գավթում ինձ գոնե լրջորեն անհանգստացնում է:

Հետդարձին երկուսս էլ լուռ էինք: Սեզարի լռությունը գուցե թե «հայկականացված» տրամադրությունից էր, իսկ իմը՝ Առաքելոց եկեղեցու մոտ մշտապես «հերթապահող» այն տղայի ներկայությունից:

…Երանի քեզ, Սեզար, որ օրը մի տասն անգամ անցնում-դառնում ես Վարդանի կամրջով ու ոչ մի կտոր հուզմունք չես ապրում: Բայց հիմա ուրախ եմ, որ ասում ես, թե ամեն անգամ կամրջով անցնելիս քեզ եմ հիշելու: Գիտեմ, Սեզար, քո հիշողությունների մեջ ես մնում եմ որպես մի տարօրինակ լրագրող, ով այդքան շատ նկարում էր Վարդանի կամուրջը, Առաքելոց եկեղեցին, բերդը, բերդի ստորոտին իրենց հնաբույր տներում ապրողներին՝ միշտ զարմանալով, թե ինչ շատ երեխաներ կան հոլիկներ հիշեցնող այս փոքրիկ տներում:

Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ

Թերթելով անցյալի էջերը

ԷՄՄԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էմմա Ալեքսանդրյանը ծնվել է 1927 թվականին Երևանում: 1951 թվականին ավարտել է Երևանի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը: 1956-1993 թվականներին եղել է Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտի նախադպրոցական մանկավարժության ամբիոնի վարիչ: 1970 թվականին Մոսկվայում պաշտպանել է դոկտորական թեզ՝ դառնալով առաջին կին դոկտորը: 1988 թվականի երկրաշարժից անմիջապես հետո Էմմա Ալեքսանդրյանի նախաձեռնությամբ հիմնվել է Հայաստանում առաջին մանկական հոգեբանության վերականգնողական կենտրոնը, որը գործել է մինչև 1993 թվականը, միայն առաջին երկու օրվա ընթացքում դիմելով մի շարք կազմակերպությունների հավաքել է 4 հազար ռուբլի, որն էլ ծառայել է առաջին անհրաժեշտության ապրանքներն գնելու և մարդկանց օժանդակելու համար:

Էմմա Ալեքսանդրյանը օժտված էր մարդկային այնպիսի որակներով, որը բնորոշ է միայն ինքնավստահ և բանիմաց կնոջը: Երկրաշարժի ժամանակ նա որբ մնացած երեխաների համար մայր էր, ով ջանք ու եռանդ չէր խնայում նրանց օգնելու և օր առաջ նախկին կյանքին ետ բերելու համար: Նրա անվան հետ են կապված մի շարք պատմություններ, որոնցից մեկն ինքն անձամբ պատմել է թանգարանի աշխատակիցներին: Պատմում էր, թե ինչպես մի զինվորական փլատակներից հանում է մի հղի կնոջ, ով կորցրել էր հարազատներին: Էմմա Ալեքսանդրյանը գրկաբաց ընդունում է այս կնոջը և որպես սփոփանքի խոսքեր ասում. «Նահիրա ջան, աղջիկս, մեզ հիմա արի, քաջասիրտ տղաներ են պետք: Դու պիտի տղա ունենաս»: Օրեր անց կինը ծննդաբերում է և անունն էլ Էմմա Ալեքսանդրյանն է դնում՝ Եղիշե, իր հոր՝ կարսեցի Արտաշես Ալեքսանդրյանի մանկության ընկեր Եղիշե Չարենցի անունով: Բարեբախտաբար հայտնվում է նաև ընտանիքի հայրը և Էմմա Ալեքսանդրյանը դառնում է երեխայի կնքամայրը: Հետագայում էլ անընդհատ կապ պահպանում այս ընտանիքի հետ:

1994 թվականից հրավիրվել է Չիկագո (ԱՄՆ), եղել Նորդ-Իսթերն համալսարանի վերականգնողական հոգեբանության սեմինարների ղեկավար, 1995-2000 թվականներին ղեկավարել է Ռավենսվուդ հոսպիտալի ծերերի հոգեբանական վերականգնողական ծրագիրը, 2000 թվականից եղել է Հեմփթոնպլազա հոսպիտալի «Հոգեբանական խնամք» ծրագրի տնօրեն:

Էմմա Ալեքսանդրյանը բազմաթիվ գրքերի, աշխատությունների և մենագրությունների հեղինակ է, ավելի քան 30 երկրներում մասնակցել է նախադպրոցական և դպրոցական մանկավարժությանը նվիրված բազմաթիվ գիտաժողովների, որտեղ հանդես է եկել զեկուցումներով և ելույթներով:

Ներառվել է «20-րդ դարի արհեստավարժ և գործարար կանայք» (2003, Քեմբրիջ) և «20-րդ դարի նշանավոր գիտնականները» տեղեկատուներում:

Մի շարք միջազգային հոգեբանական ընկերությունների անդամ էր:

Մահացել է 2019 թ. Երևանում:

Անկախ ամեն ինչից

Հեռավորությունն անսիրտ մարդու է նման. տանջում է ու ստիպում ցավել: Բայց այդ «անխիղճ մարդը» նաև կոփելու հատկություն ունի: Սերը կամ ընկերությունն ավելի է ամրանում, երբ հարկ է լինում դիմանալ հեռավորությանը: Մեր օրերում հեռու ասվածը շատ հարաբերական է: Բավական է կամենանք մեկին տեսնել, ու տեսազանգը կգա օգնության: Մենք՝ բանասերներս, մեր ուսանողական կյանքի առաջին քայլերն արել ենք հենց դասախոսի հետ տեսահաղորդակցման միջոցով: Ինչ խոսք, շատ հաճելի է տանից լսել դասախոսությունները: Օնլայն դասերը նաև շատ առավելություններ ունեն, ու մինչ դու քիթդ կկախես մտատանջվելով, որ այս կիսամյակ էլ են դասերը օնլայն լինելու, ես կնշեմ առավելությունները, որ էլ չտխրես:

Շատերն ասում են, որ դասերը դժվար են ու անմատչելի: Սիրելի՛ ուսանող, եթե դու ցանկանում ես սովորել, անգամ եթե դու Մարսում կրթություն ստանաս, միևնույն է, կսովորես ու կհարստանաս գիտելիքներով: Կարևորը ցանկությունն է, իսկ մեր դասախոսները, հպարտությամբ կարող եմ նշել, լավագույնն են ու ամեն ինչ կանեն, որ դասերը մատչելի լինեն ինձ ու քեզ համար:

Ժամանակն ամենաթանկ բանն է, իսկ օնլայն դասերը մեզ «մի պարկ ժամանակ» են նվիրում, այն ժամանակը, որ պիտի վատնենք տարբեր փոխադրամիջոցներով համալսարան հասնելու համար, կարող ենք օգտագործել ու հանձնարարված գրքերն ընթերցել կամ պարզապես մի փոքր հանգստանալ: Ի՞նչ են սիրում անել բոլոր երիտասարդները (պատասխանն ավելի պարզ է, քան կարելի է պատկերացնել). քնել: Քնկոտները հատկապես զգացած կլինեն այս առավելությունը. համալսարան գնալու դեպքում հարկ էր լինում վաղ արթնանալ, իսկ երբ օնլայն են դասերը՝գրեթե բոլորս ժամը 9-ին ենք արթնանում:

Նորաձևության հետևից չընկնողների համար էլ լավ լուր ունեմ. այլևս հարկ չկա ամեն օր մտատանջվել, թե ինչ հագուստով կարելի է ներկայանալ հանրությանը: Եվս մեկ առավելություն. օնլայն դասերի ժամանակ հեռու մարզերից Երևան գալու և բնակարան վարձակալելու կարիք չկա: Եվ վերջում՝ անկախ նրանից առկա, թե հեռավար ուսուցման կողմնակից ես դու, արժևորի՛ր կրթվելու քո հնարավորությունը: Արժևորի՛ր անկախ ամեն ինչից:

Թագուհի ԱՂԱՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն մասնագիտացման 1-ին կուրսի ուսանողուհի

ՍՈՎՈՐԵՆՔ ԳՆԱՀԱՏԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ՈՒՆԵՆՔ

Հաջողության հասնելու համար շատ կարևոր նախապայման է կրթությունը, որն իր ուրույն տեղն ունի յուրաքանչյուրիս կյանքի ամեն պահի ու վայրկյանի մեջ:

Երբ 2020 թվականին ընդունվում էի համալսարան, չէի պատկերացնում՝ ինչպես է անցկացվելու համալսարանական կրթությունը, և վախն ավելի էր սաստկանում, երբ դեռ պարզ չէր՝ հեռավա՞ր ենք անցկացնելու դասերը, թե՞ առկա:

Իրականում չկա լիովին վատ կամ լիովին լավ որևէ բան այս կյանքում: Որոշումը մերն է. մենք տվյալ երևույթը կարող ենք դիտարկել թե՛ լավ, թե՛ վատ կողմերից. ուղղակի ցանկություն է պետք: Մեզ՝ ուսանողներիս համար վիճելի հարցեր են հեռավար կրթության լավ և վատ կողմերը: Երբ ընկերներիս հարցնում եմ, թե ո՛ր ուսման ձևն է ավելի հարմար, ո՛րն են նախընտրում, գրեթե բոլորն առկա կրթության կողմնակից են: Ես նույնպես համակարծիք եմ նրանց հետ. առկա կրթությունն այլ «աշխարհ» է, բացի այդ, կրթությունն ավելի որակյալ է լինում, երբ տեղի է ունենում դասախոս-ուսանող առերես հանդիպումը: Հեռավար կրթությունը մեզ զրկել է առերես հանդիպումներից, իրար ավելի լավ ճանաչելուց, չնայած, ծանոթությունն օնլայն տարբերակով ևս ստացվում է. աշխարհն այսօր անցել է առցանց, էլեկտրոնային հաղորդակցության…

Հեռավար ուսման վատ կողմերից մեկն էլ այն է, որ կարծես արդարությունն ինչ-որ տեղ ռիսկային է դառնում, ոմանք կեղծում են ճարպկորեն… Թեև ընկերուհիս պնդում է, որ անարդարի ու կեղծողի համար չկա տարբերություն՝ առկա կամ հեռավար. երկու դեպքում էլ կեղծողը կկեղծի:

Ցավոք, հեռավար ուսուցման ընթացքում հնարավոր չէ գործնական պարապմունքներով ամրապնդել ստացած գիտելիքները: Սա էլ հեռավարի բացասական կողմերից մեկն է:

Չեմ ուզում վատատես լինել, և անգամ այս դժվար դասապրոցեսի մեջ ունեցել եմ մի կարևոր ձեռքբերում, որ ինձ տվել է հեռավար ուսուցումը. ես հմտացել եմ օնլայն հարթակներից օգտվելու ձևերի, նրանցում որոշակի գործունեություն ծավալելու գործընթացներում: Խոստովանեմ, որ սկզբում բարդ էր դասերին հեռավար մասնակցել, չէի հարմարվում, հետո սկսեցի քիչ-քիչ հարմարվել, ընդունել «կյանքն այնպիսին, ինչպիսին, որ կա»:

Իրականում այսօր մեծ է համալսարան գնալու ցանկությունը, բայց եթե հեռավար ուսումը շարունակվի, պետք է «կրենք մեր խաչը» և առանց դժգոհության սովորենք, սովորենք գնահատել այն, ինչ ունենք, սովորենք ոչ թե գնահատականի համար, այլ մեր ապագայի ու կոչման համար:

ԱՆՆԱ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԲԱՑ ԱՉՔԵՐՈՎ ՆԱՅԵԼ ԱՇԽԱՐՀԻՆ …

Բաց աչքերով նայել աշխարհին… Մի՞թե այդքան հեշտ է փակ աչքերով շրջել սենյակից սենյակ: Մի՞թե լուսավորությունն ավելի գեղադասելի չէ, քան մթությունը: Լույսը փորձում է մտնել մեր աշխարհ, բայց, ավա՜ղ, մենք ամուր սեղմել ենք, որպեսզի կույր դռները չբացվեն…

Բացենք մեր աչքերը, որպեսզի տեսնենք իրականության շողը՝ կախված մեր գլխին: Բացենք մեր աչքերը, որպեսզի մեր գործած վատ արարքների պատճառով տան պատերը տեսնելիս լուռ, ամոթահար չկանգնենք: Բացենք մեր աչքերը, քանզի նրանք մի օր հոգնելու են ամուր փակվածությունից, փորձելու են բացվել, բայց մենք չենք թողնելու, անընդհատ խոչընդոտելու ենք: Բացենք մեր աչքերը՝ տեսնելու մարդկանց իրական դեմքը, մտնելու նրանց հոգիների անկյունները, քննելու ամեն մի մասը: Բացենք, որպեսզի աշխարհը համբերության ծովի մեջ խորասուզվի: Բացենք, որ Աստված տեսնի մեզ, և իր մեծ կյանքի մեջ մեզ սպասի, որպեսզի մենք էլ լցվենք այն մեծ սիրով, որն Աստված է պահում իր մեջ՝ բաժանելով յուրաքանչյուրիս: Օգտվենք այդ սիրուց, լցնենք ամեն ինչի մեջ և վերջում կտեսնենք, որ ամեն տեղից սեր է կաթում, բայց չիմանանք՝ տեղը սպառվելուց է կաթում, այլ կաթում է, որ լցվի այն սրտերը, որոնք մինչև վերջ չեն լցվել և դեռ այնքա՜ն, այնքա՜ն պիտի լցվեն…

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ

Մոսկվայի Հայկական գանձատուն

Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ստեղծման պատմությունը

2021 թվականի հունվարի 24-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում միջին և բարձր դասարանների աշակերտների մոտ անցկացվեց բաց դաս՝ «Մոսկվայի հայկական գանձատուն. արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ստեղծման պատմությունը» թեմայով և ճանաչողական էքսկուրսիա:

Դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փալևանյանն իր շնորհակալական խոսքը հղեց Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանին, ով այս յուրօրինակ միջոցառումն անցկացնելու հնարավորություն ընձեռեց՝ շրջայց Լազարյանների նախկին կալվածատնով, որը հիմնադրվել է 1815 թվականին, ուր այժմ գտնվում է Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Ի դեպ նշենք, որ ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը գտնվում է իր երկրի անունը կրող փողոցի վրա՝ Հայկական նրբանցք, տուն 2:

ՀՀ դեսպանության մամուլի ծառայության աշխատակից, քաղաքագիտության թեկնածու Արամ Ոսկանյանը հանգամանորեն ներկայացրեց Լազարյանների տոհմի և ճեմարանի պատմությունը: Այն սկիզբ է առնում դեռևս Իվան Լազարևից, ով իր միջոցները որպես ժառանգություն թողեց հայկական դպրոց հիմնադրելու նպատակին ծառայեցնելու համար (1800 թ): 1814 թվականի մայիսի 10-ին տեղի ունեցավ դպրոցի նոր շենքի հիմնադրման հանդիսավոր արարողությունը: 1815 թվականի մայիսի 12-ին դպրոցն ընդունեց իր առաջին սաներին: 1827 թվականի դեկտեմբերի 26-ին դպրոցն անվանվեց Լազարյանների արևելագիտության ինստիտուտ:

Աշակերտները հիացմունքով ծանոթացան մեզ հասած մեծ բարերարների՝ Լազարյանների ժառանգությանը և ուշիուշով լսեցին բանախոսին: Այնուհետև նրա ուղեկցությամբ դպրոցի սաները, ուսուցիչները և ծնողները շրջայց կատարեցին պատմական շենքում և դիտեցին այնտեղ գտնվող պատմական նմուշները, մասնավորապես ձեռագրերը, գրքերը, խնամքով պահպանված արվեստի գործերը:

Երեսուներեք տարի անընդմեջ Լազարյան ճեմարանի ավանդույթներն է շարունակում ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցը, որը հիմնադրվել է 1988 թվականին:

Հանդիպում ժամանակակից գրող Դավիթ Սամվելյանի հետ

Մեր հոգու տնակը

Մի անգամ ցավն ու բերկրանքը հանդիպում են: Ցավը ներկայանում է սև շղարով, որով կարծես ցանկանում էր թաքնվել: Բերկրանքը, կարծես հակադիր ցավին, հագել էր սպիտակ, շողշողացող ու փայլուն զգեստ: Ցավը խոսել անգամ չկարողացավ, իսկ բերկրանքն անընդհատ խոսում ու ծիծաղում էր: Ցավն ինքն էլ իր տխրության պատճառը չգիտեր: Նա նորից վերադարձավ իր տնակը: Այնտեղ ամեն ինչ գեղեցիկ էր, փայլուն ու գունեղ: Մի՞գուցե ցավն էլ ինքն իրեն էր խաբում: Ցավը մտածեց գտնել իր իմաստը, իր փիլիսոփայությունը: Ցավը ինքն էլ էր տխուր, տխուր այն միլիոնավոր մարդկանց պես, որոնց տխրության աղբյուրը ինքն էր: Ցավը սովորեց գնահատել ինքն իրեն և մեզ էլ սովորեցրեց: Առանց լացի չենք գնահատում ժպիտը, առանց կորցնելու՝ ունեցածը, առանց ընկնելու՝ վերելքը, առանց ցավի՝ կյանքը:

Մենք բոլորս մեր հոգու տնակում ունենք մի ցավ, որը մեզ սովորեցնում է շատ բաներ նորովի արժևորել: Մենք ինքնաճանաչման խնդրի հաղթահարման ելքեր ենք փնտրում: Երբեմն դիմացինի ցավն անգամ մեզ ինքնադրսևորման հնարավորություն է տալիս՝ կողքից ծանրութեթև անողի կերպարով:

Այսօր սկսենք արժևորել մեր կյանքը, որը մեկ ուրիշը արժևորեց իր կյանքից՝ հանուն դրա ընկնելով: Մենք ցավ ունեցող ազգ ենք, բայց ոչ ցավով կնքված: Մենք մեր ցավը պատվով կտանենք, հանուն այն սերնդի, որը ցավակիր դարձրեց մեզ: Մենք դեռ կժպտանք, ամենակարևորը՝ ցավին հաղթած ժպիտով:

Լիլիթ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մի կորած հուշ

Հուշեր կան, որոնք եր բեք չեն կորչում, մնում են մեր ուղեղի ծալքերում, և որքան էլ փորձում ենք երևակայությամբ աղճատել, միևնույն է, անփոփոխ են, անթարթ:

Չգիտեմ՝ ինչպես է ստացվել մանկությանս հուշերն իմ մեջ միշտ վառ են, այնքան վառ, որ հիշում եմ, թե ինչպես օրերից մի օր անզգուշաբար ընկա, թե ինչպես էր մայրս ամեն անգամ լացս դադարեցնելու միջոց գտնում:

Մանկությունիցս շա՜տ հուշեր են մնացել, բայց իրերը, առարկաները և մանկությանս լուսավոր տունը չի մնացել: Մի կենդանի հիշատակ էր մնացել իմ մանկությունից՝ մանկությանս բալլադը հիշեցնող չալ շունը՝ Չալոն...

Ամեն անգամ տարեդարձ ենք նշում, բայց մեր հոգում չենք զգում որևէ փոփոխություն և չենք զգում, թե ինչպես ենք մեծանում... Այսօր մի տեսակ ամեն ինչ այլ էր: Փետրվարը մի տեսակ ավելի ցրտեց: Հայրս երկար էր փնտրել Չալոյին, բայց չէր գտել...

- Մա՛մ, մանկությունս կորավ: Մա՛մ, Չալոն էլ հորս գրկի մեջ չի տեղավորվում, այնպես, ինչպես տեղավորվել էր քո տարեդարձին՝ այն օրը, այն տարին, երբ ես առաջին դասարանում էի: Մա՜մ, Չալոն էլ կորցրեց մեր մանկության լուսավոր տունը:

Մա՜մ, մանկությունս կորավ:

Սյուզաննա ԱՐԱԲԱԿՉՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

Բաց դռների օր Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Առկա ուսուցմամբ սովորող ուսանողների 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են փետրվարի 9-ից մինչև մարտի 9 –ը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 15.02.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ